իւրոց, որպէս թէ ամենեցունց ընդ մի բերան հնչել. եթէ բարձր և թէ ցած և ոչ հարստահարել ընկեր զընկեր»(¹)։ Նա եւս մասնակից էր Լոռուայ ժողովին, իբրև մէկը ժամանակի նշանաւոր վարդապետներից։ Նա յիշուած է 1214 թուին նոյն վանքում գրուած ձեռագրի յիշատակարանի մէջ, «ՈՒծապատիւ և մեծայնուն վարդապետ» տիտղոսներով. ձեռագրի ստացողներն են Թադէոս և Հայրապետ կրօնաւորները, զբրներ, որոնց թւում և «Գէորգ»(¹)։ Այս ընծայաբերութեան համար ունինք և յատուկ արձանագրութիւն բլրի վերայի եկեղեցու հիւսիսային պատին, բարձր լուսամուտի տակ՝ երկրորդը (պարկ. 10).

1. Կամաւն ՈՒՅ մեք նուաստ քահանայք Թադէոս եւ Հայրապետ ստացաք աւետարան
2. զարդարեալ ոսկով եւ արծաթով(²)

Պատկեր II

Պարապից դուրս՝ արեւելեան կողմի գերեզմանատան մատրան արձանագրութիւն.

ուած և նկարազարդուած Իգնատիոսի ձեռքով «ի վանքս որ կոչի Հաւու Թառ, ընդ հովանեաւ սրբ կաթողիկէիս և մեծահռչակ սուրբ նշանիս Ամենափրկիչ անուն կոչեցեալ, յառաջնորդութեան սուրբ ուխտիս, հեզի և ամենաբարւոյ Պաւղոս վարդապետի...»։ Վանքի վարդապետներն են Եղիա և Մխիթար, իսկ փակակալը Յակոբ ընտիր քահանան. յիշուած են և ուրիշ միաբան-

ի մեր արդեանց եւ տուաք ի սրբ ուխտս եւ այլ արդիւնք եւ սպ
3. ասաւորքս ետուն ։Բ։ աւր ժամ

(¹) Գանձ. Ղուկ. հրատ. 1909. 162։

(¹) Ալիշան. Այր. 356։ Բարսեղ Սարգսեան. Մայր Յուցակ Վենետ. 513։ Իգնատիոս նկարչի մասին տե՛ս մեր յօդուածը. Սիոն, 1932. Յունիս. եւն։

(²) «Զարդարեալ ոսկով եւ արծաթով» բառերը միայն կազմին կարող են վերաբերիլ. Հայոց մէջ շատ հազուագիւտ է արծաթի գործադրութիւնը մանրանկարչութեան մէջ։